Հասարակության կարծիքը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերաբերյալ

27.01.2019թ.

2018թ.-ի դեկտեմբեր ամսվա ընթացքում ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի աշխատակիցների, բաժնին կից որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական խմբի և համայնքային խմբի ուսանողների համատեղ ջանքերով իրականացվեց փոքր մասշտաբի հետազոտություն մարզի մի քանի համայնքներում, մասնաճյուղի վերաբերյալ հասարակության կարծիքը ուսումնասիրելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալ ժամանակաշրջանը, ուսանողները բնակիչներին այցելել են նախատոնական տրամադրությամբ՝ իրենց հետ տանելով փոքրիկ ամանորյա նվեր և մասնաճյուղի կողմից շնորհավորական բացիկ:

Ուսումնասիրությունն իրականացվել է բնակիչների հետ անմիջական շփման և անկեղծ զրույցի միջոցով Տավուշի մարզի Իջևան և Դիլիջան քաղաքներում, Գոշ, Հաղարծին, Այգեհովիտ, Աչաջուր, Սեվքար, Ազատամուտ, Վազաշեն, Գետահովիտ համայնքներում: Առաջարկվող հարցերի քանակը քիչ էր, հստակ և հասկանալի ձևակերպված, և նպատակ ուներ բացահայտելու մարզի բնակիչների կարծիքը մասնաճյուղի, նրա պրոֆեսորադասախոսական կազմի, իրականացվող ուսումնառության և ընդհանրապես գործունեության վերաբերյալ:

Հետազոտությունն անց է կացվել հիմնականում միջին տարիքի մարդկանց շրջանում (մոտավորապես 40 մարդ), ովքեր մասնաճյուղի շրջանավարտներ չեն: Հարցման մասնակիցների գերակշռող մասը նշել են, որ ունեն երեխա, բարեկամ կամ ծանոթ, որոնք մասնաճյուղի ուսանող են, կամ շրջանավարտ:

Ըստ մասնակիցների իրենց երեխաների և ծանոթների մասնաճյուղ դիմելու հիմնական պատճառները որակյալ և բարձր կրթության տրամադրումն է, բուհի ապահովվածությունը բարձրորակ մասնագետներով, բարձր հեղինակությունը, մարզում գտնվելը, ֆինանասական հնարավորությունները (մատչելի վարձաչափերը), հեռավորության հաղթահարելիությունը: Այսինքն, մասնաճյուղի առկայությունը մարզում բացի բարձրագույն ուսումնառություն ապահովելը լուծում է նաև մի շարք սոցիալական խնդիրներ:

Հարցման մասնակիցների մի մասը մասնաճյուղի մասին ունեցած դրական կարծիքը հիմնավորել է սեփական տեղեկացվածությամբ, մի մասը նշել է, որ հիմնվում է շրջապատող անձանց կարծիքների վրա, ինչը հաստատում է դրական կարծիքի առկայությունը նաև հարցման շրջանակներից դուրս:

Իսկ ահա ըստ հետազոտության ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ չդիմելու հիմնական պատճառը նախընտրելի մասնագիտության բացակայությունն է:

Հարցման այն մասնակիցները, որվքեր անձամբ ունեցել են առընչություն մասնաճյուղի հետ, նշել են, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը չի զիջում մայր բուհին և ՀՀ այլ բուհերին, քանի որ հավասարաչափ ապահովում է լավ կրթություն ստանալու հնարավորություն, և այդ կրթությունը ստանալը կամ չստանալը արդեն կախված է ուսանողի ցանկությունից և աշխատասիրությունից: Վերջիններս շեշտել են նաև մասնաճյուղի շարունակական առաջընթացը և զարգացումը, և մեծամասամբ նշել, որ միանշանակ խորհուրդ կտան ծանոթներին և բարեկամներին կրթություն ստանալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

Հարցվողները նշել են նաև, որ մասնաճյուղում կրթություն ստանալը բավականին օգնում է հետագա կարիերայի կառուցմանը, հատկապես մարզի ներսում, քանի որ մասնաճյուղն արդեն իսկ իր բարձ հեղինակության շնորհիվ, իր շրջանավարտների հանդեպ որոշակի դրական կարծիք է ապահովում գործատուի համար։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին